

«ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ



ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018





<b>1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ</b> .....	<b>4</b>
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում .....	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղափոխում .....	16
1.3. Ջրահեռացման համակարգ .....	17
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում .....	18
1.5. Էներգահամակարգ .....	19
1.6. Մեքենա-մեխանիզմներ .....	21
<b>2. Առևտրային տնօրինություններ</b> .....	<b>22</b>
2.1. Բաժանորդների տվյալներ .....	23
2.2. Հասույթ .....	23
2.3. Գանձում .....	26
2.4. Դեբիտորական պարտքեր .....	26
2.5. Ջրաչափեր .....	28
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում ....	29
<b>3. Տեխնիկական տնօրինություն</b> .....	<b>30</b>
3.1. Ջրամատակարարման շարունակականություն .....	31
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում .....	33
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ .....	35
3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ .....	36
3.5. Ջրատար համակարգի բարելավում .....	37
<b>4. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ</b> .....	<b>39</b>
4.1. Համակարգչային ցանց .....	40
4.2. Ինտերակտիվ համակարգ .....	40
4.3. Նոր սարքավորումներ և ծրագրեր .....	40
<b>5. Լրատվական ծառայություն</b> .....	<b>41</b>
<b>6. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն</b> .....	<b>44</b>
6.1. Փաստադրժերի մշակում .....	45
6.2. Արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննություն .....	45
6.3. Դասընթացներ /սեմինարներ .....	45
6.4. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում .....	46

ՀԱՅԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ







## 1.1 ԶՐԱՍԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում շահագործման տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված բազմաթիվ աշխատանքներ: Վերջիններիս հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև:

### Քաղաք Երևան

● Քանաքեռ 14 փողոցի 44/2 շենքի դիմացի 63 մմ պոլիէթիլենային, Գոգոլի 24/12 200 մմ թուջե և Սարկավազի փողոցի 128 շենքի ետնամասում 50 մմ պողպատե ջրագծերի ֆասսված հատվածների փոխարինումից հետո հնարավոր եղավ ոչ միայն կանխել կրկնվող վթարները, այլև ցանցում ճնշումների կարգավորման արդյունքում բարելավել նշված հասցեների ջրամատակարարումը:



● Նորք Մարաշ 13 փողոցում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և վերացվել է թվով 1 վթար, ինչի արդյունքում խնայվել է մոտ 3 լ/վ ջրաքանակ:



Նորք Մարաշ 13 փ.

● Փափազյան 16 շենքի մոտակայքում 80 մմ, Արաբկիր 43 փողոցի 12 տան 100 մմ և Աղբյուր Մերոք 5 հասցեի 50 մմ պողպատե խողովակների վթարված հատվածների փոխարինումը կանխեց առաջացող գաղտնի վթարների հավանականությունը և նպաստեց վերոնշյալ հասցեների ջրամատակարարման բարելավմանը:



Փափազյան 16 շենքի ջրամատակարարման սխեմա



Աղբյուր Մերոք 5 հասցեի ջրամատակարարման սխեմա



Արաբկիր 43 փողոցի ջրամատակարարման սխեմա

● Ջրամատակարարման բարելավման և վթարավերականգնողական աշխատանքներ են կատարվել նաև Հալաբյան 27 և 29 շենքերի մոտակայքում գտնվող 100 մմ թուջե, Դավթաշեն 1-ին թաղամասի 48 շենքի 150 մմ պողպատե քայքայված ջրագծերի վրա, որտեղ փաստված հատվածները նորով փոխարինելու արդյունքում տնտեսաված ջրաքանակն ուղղվել է տեղի ջրամատակարարման բարելավմանը:



Հալաբյան փ. ջրամատակարարման սխեմա



Դավթաշեն 48 շենքի ջրամատակարարման սխեմա

### Քաղաք Վանաձոր

● Քաղաքի Երևանյան 72, 76 շենքերի համար ջրամատակարարման տնողությունն ավելացնելու նպատակով կառուցվել է 50 մմ 25 մ խողովակ և միացում տրվել 24-ժամյա գրաֆիկով ջրագծին: Աշխատանքների արդյունքում նշված հասցեների ջրամատակարարումն օրական 6 ժամից դարձել է շուրջօրյա:



Երևանյան 72 և 76 շենքերի ջրամատակարարման սխեմա

### Քաղաք Կապան



Հ. Ավետիսյան փ.

● Քաղաքի Մ. Պապյան 24, 26 և Հ.Ավետիսյան 26, 28, 30, 32 և 34 շենքերի ջրամատակարարումն իրականացվում էր Հ. Ավետիսյան ՕԿՁ-ից: Նշված շենքերի ջրամատակարարման ներքին ցանցը գտնվում էր խիստ անմխիթար վիճակում, ինչը հանգեցնում էր հաճախակի վթարների և մինչև 7 լ/վ հոսակորստի:

Խնդրի կարգավորման նպատակով իրականացվել են լայնածավալ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնց շրջանակներում նախկին 100 մմ 450 մ մետաղական ջրագիծը փոխարինվել է 60-90 մմ 450 մ պոլիէթիլենային խողովակաշարով:

● Փոխարինվել են նաև տարբեր տրամաչափի փականներ և կցամասեր, առանձին մուտքերի համար տեղադրվել են անհատական փականներ, որոնցից որոշների համար կառուցվել են առանձին հորեր:

Աշխատանքներն իրականացվել են բարձրորակական չափանիշներով, խրամուղիները փորվել են 60-80 սմ խորությամբ, ապա հարթեցնելուց հետո փովել է ավազի շերտ, տեղադրված խողովակները ևս ծածկվել են ավազի շերտով, որից հետո իրականացվել է ետլիցք:



Մ. Պապյան փ.





Հ. Ավետիսյան փ.

● Կատարված աշխատանքների արդյունքում վերոնշյալ ջրագծից սնվող բաժանորդներն ապահովվել են շարունակական ջրամատակարարմամբ, կանխվել են հնարավոր վթարները, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը:

**Քաղաք Սևան**

● Քաղաքի Նալբանդյան, Էներգետիկների և Նաիրյան փողոցներում իրականացված վթարադրոնտոլական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և վերացվել է թվով 3 վթար. խնայվել է մոտ 7 լ/վ ջրաքանակ:



**Քաղաք Ստեփանավան**



Նժդեհ փողոցի ջրամատակարարման սխեմա



Անտառային-Գերմանական թաղամասի ջրամատակարարման սխեմա

● Գարեգին Նժդեհի փողոցում զինավանի 4 շենքերի ջրամատակարարումը բարելավելու, ինչպես նաև այդ շենքերի սնուցումը զորամասի ցանցից առանձնացնելու և զորամասում ջրաչափություն իրականացնելու նպատակով կառուցվել է 90 մ 140 մ նոր պոլիէթիլենային ջրագիծ: Արդյունքում զինավանի ջրամատակարարումը 6 ժամից դարձել է շուրջօրյա, իսկ զորամասի ջրաչափական հանգույցը տեղափոխվել միացման կետ:

● Անտառային-Գերմանական թաղամասում կառուցվել է 90 մ 70 մ նոր պոլիէթիլենային ջրագիծ տեղի ջրամատակարարումը բարելավելու և հաճախակի կրկնվող վթարները կանխելու համար:

● Գերմանական թաղամասի սնուցումն իրականացվում էր 300 մմ թուջե վթարային խողովակով, որը գտնվում էր 4 մ խորության տակ: Այս ջրագիծը շահագործումից հանելու համար կառուցվել է 63 մմ 50 մ նոր պոլիէթիլենային խողովակ, ինչի արդյունքում տնտեսված 0.9 լ/վ ջրաքանակն ուղղվել է նշված թաղամասի ջրամատակարարման բարելավմանը:



Գերմանական թաղամասի ջրամատակարարման սխեմա

**Քաղաք Սպիտակ**

● Թորոսյան փողոցում վթարային ջրագիծը շահագործումից հանելու նպատակով կառուցվել է 40 մմ 55 մ պոլիէթիլենային ջրագիծ, 4 հատ ջրաչափական դիտահոր, իսկ միացման կետում տեղադրվել է 40 մմ փական: Աշխատանքի արդյունքում խնայվել է 1 լ/վ ջրաքանակ, իսկ այդ հատվածի բաժանորդների ջրաչափական հանգույցները տեղափոխվել են սահմանագատման կետեր:



Թորոսյան փողոցի ջրամատակարարման սխեմա

**Քաղաք Վեդի**

● Գոտիավորման խմբի աշխատակիցների կողմից Վեդի քաղաքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և վերացվել է թվով 1 վթար, ինչի արդյունքում խնայվել է մոտ 1 լ/վ ջրաքանակ:

**Քաղաք Բերդ**

● Մաշտոց փողոցի 22 շենքի մուտքագիծը գտնվում էր վթարային վիճակում: Նոր՝ 40 մմ պոլիէթիլենային խողովակով փոխարինելու արդյունքում բարելավվել է նշված շենքի ջրամատակարարումը և խնայվել 0,5 լ/վ ջրաքանակ:



Մաշտոց փողոցի 22 շենքի ջրամատակարարման սխեմա

**Քաղաք Ապարան**



Գ.Նժդեհ փողոցի ջրամատակարարման սխեմա



Ա.Հարությունյան փողոցի ջրամատակարարման սխեմա



- Գարեգին Նժդեհ 1-ին նրբանցքի 150 մ պողպատե ջրագծի վթարի վերացման նպատակով փոխարինվել է քայքայված հատվածը 200 մ պոլիէթիլենային խողովակով: Իսկ Հարությունյան փողոցի 100 մ պողպատե ջրագծի վթարի վերացնելու համար 100 մ ջրագծի հատվածը ներսրսկման փոփոխությամբ փոխարինվել է նորով: Աշխատանքների արդյունքում խնայվել է 1 լ/վ ջրաքանակ:

### Քաղաք Նոյեմբերյան

- «Գիծ Սար» կոչվող 150 մ պողպատե ջրագծի վրա հնամաշ հատվածը փոխարինելու արդյունքում տնտեսվել է 0,7 լ/վ ջրաքանակ:



«Գիծ Սար» ջրատարի ջրամատակարարման սխեմա

### Բաղրամյան համայնք

- Համայնքում իրականացված վթարա-որոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և վերացվել է թվով 1 վթար, խնայվել է մոտ 3 լ/վ ջրաքանակ:



- Քայքայված ջրագծի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Բաղրամյան գյուղի Արցախի փողոցում: Նախկին՝ 100 մ թուջե ջրագծի 480մ հատվածը փոխարինվել է պոլիէթիլենային խողովակաշարով՝ խրամուղու եղանակով: Թվով 20 բաժանորդների ջրաչափական դիտահորերը տեղափոխվել են սեփականություն հանդիսացող տարածքներից դուրս:

- Ջրագծի փոխարինման աշխատանքներ են իրականացվել նաև նույն գյուղի Շիրազի փողոցի 1-ին փակուղում: Նախկին՝ 50 մ պողպատե ջրագծի 100 մ հատվածը փոխարինվել է նույն տրամագծի պոլիէթիլենային խողովակաշարով: Կատարված աշխատանքների արդյունքում վերոնշյալ ջրագծերից սնվող տարածքներն ապահովվել են շարունակական ջրամատակարարմամբ, կանխվել են հնարավոր վթարները, կրճատվել են շահագործման ծախսերը:



## Խանջյան համայնք

● Ջրագծի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Խանջյան գյուղի 5-րդ փողոցում: Նախկին 80 մմ խիստ վթարային վիճակում գտնվող պողպատյա խողովակի 196 մ հատվածը փոխարինվել է 50 մմ պոլիէթիլենային նոր խողովակաշարով՝ խրամուղու եղանակով: Կատարվել է թվով 3 միացում, որոնց շարքից դուրս եկած պողպատյա մուտքագծերը փոխարինվել են մետաղապլաստե նոր խողովակներով, իսկ ջրաչափերը դուրս են բերվել բաժանորդների սեփականություն հանդիսացող տարածքներից:



## Մյասնիկյան համայնք

● Ջրագծի փոխարինման աշխատանքներ են կատարվել Մյասնիկյան գյուղի Հ. Ավետիսյան փողոցում: Նախկին 50 մմ քայքայված պողպատե ջրագծի 280 մ հատվածը փոխարինվել է 63 մմ պոլիէթիլենային խողովակով՝ խրամուղու եղանակով: Թվով 32 բաժանորդների մուտքագծերից կատարվել է միացում: Վթարային վիճակում գտնվող պողպատյա մուտքագծերը փոխարինվել են մետաղապլաստե նոր խողովակներով:

● Ջրագծի փոխարինման աշխատանքներ են իրականացվել նույն գյուղի Շիրազի փողոցում: Նախկին 50 մմ խիստ վթարային վիճակում գտնվող պողպատյա ջրագծի 325 մ հատվածը փոխարինվել է 63 մմ պոլիէթիլենային նոր խողովակաշարով: Միացվել է թվով 28 մուտքագիծ, որոնց շարքից դուրս եկած պողպատյա մուտքագծերը փոխարինվել են մետաղապլաստե նոր խողովակներով: Բաժանորդների ջրաչափական դիտահորերը դուրս կբերվեն իրենց սեփականություն հանդիսացող տարածքներից:



## Ակնալիճ համայնք

● «Արմավիր» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Ակնալիճ գյուղի Արագածոտնի փողոցը սնող ջրագիծը երկարատև շահագործման արդյունքում խիստ քայքայվել էր և գտնվում էր վթարային վիճակում: 2018 թ. ներդրումային ծրագրի շրջանակներում «Արմավիր» տեղամասի աշխատակիցների կողմից վերոնշյալ փողոցում իրականացվել են ջրագծի փոխարինման աշխատանքներ: Նախկին 80 մմ պողպատե ջրագծի 550 մ հատվածը փոխարինվել է 90 մմ պոլիէթիլենային նոր խողովակաշարով՝ խրամուղու եղանակով: Թվով 32 բաժանորդների ջրաչափական դիտահորերը տեղափոխվել են բաժանորդների սեփականություն հանդիսացող տարածքներից դուրս: Ջրագծի վերակառուցման արդյունքում կանխվել են հնարավոր վթարները, կրճատվել են շահագործման ծախսերը:





## Մրգաշատ համայնք

● 2018 թ. ներդրումային ծրագրի շրջանակներում ջրագծերի փոխարինման լայնածավալ աշխատանքներ են իրականացվել Մրգաշատ գյուղում: 4-րդ փողոցը սնող նախկին 50-100 մմ մետաղական ջրագծի մոտ 620 մ հատվածը գտնվում էր խիստ քայքայված և վթարային վիճակում: Տեղամասի աշխատակիցների կողմից քայքայված ջրագիծը փոխարինվել է նոր 75 մմ 620 մ պոլիէթիլենային խողովակաշարով, որից 200 մ՝ ինչպես, իսկ 420 մ՝ խրամուղու եղանակով:



● Մեկ բաժանորդի ջրաչափական դիտահորը տեղափոխվել է սեփականություն հանդիսացող տարածքից դուրս, ինչպես նաև կատարվել են թվով 5 բաժանորդների մուտքագծերի միացման աշխատանքներ:

● Ջրագծի փոխարինման աշխատանքներ են իրականացվել նաև նույն փողոցի 1-ին փակուղում: Խիստ վթարային վիճակում գտնվող 50 մմ մետաղական ջրագծի 100 մ հատվածը փոխարինվել է նույն տրամագծի պոլիէթիլենային խողովակաշարով: Թվով 3 բաժանորդներից 2-ի մուտքագծերը միացվել են, 3-րդի ջրաչափական դիտահորը տեղափոխվել է սեփականություն հանդիսացող տարածքից դուրս:



● Քայքայված ջրագծի փոխարինման աշխատանքներ են իրականացվել նաև Մրգաշատ գյուղի 12 փողոցում: Նախկին 100 մմ մետաղական ջրագծի 500 մ հատվածը փոխարինվել է 75 մմ պոլիէթիլենային խողովակաշարով՝ խրամուղու եղանակով: Թվով 24 բաժանորդներից 19-ի ջրաչափական դիտահորերը տեղափոխվել են սեփականություն հանդիսացող տարածքներից դուրս և շարքից դուրս եկած պողպատյա մուտքագծերը փոխարինվել են մետաղապլաստե խողովակներով, որից հետո իրականացվելու են նշված բաժանորդների մուտքագծերի միացման աշխատանքները:

● Երկարատև շահագործման արդյունքում խիստ քայքայվել և վթարային վիճակում էր գտնվում Մրգաշատ գյուղի 13 փողոցի 1-ին նրբանցքը սնող ջրագիծը: Նախկին 100 մմ մետաղական ջրագծի 253 մ հատվածը փոխարինվել է 63 մմ պոլիէթիլենային նոր խողովակաշարով՝ խրամուղու եղանակով: Թվով 3 բաժանորդների ջրաչափական դիտահորերը տեղափոխվել են բաժանորդների սեփականություն հանդիսացող տարածքներից դուրս:



● Սեփականություն հանդիսացող տարածքներից դուրս կրեքվեն ևս 6 բաժանորդների ջրաչափական դիտահորեր, իսկ շարքից դուրս եկած պողպատյա մուտքագծերը կփոխարինվեն մետաղապլաստե խողովակներով, որից հետո կիրականցվեն նշված 6 բաժանորդների մուտքագծերի միացման աշխատանքները:

● Ջրագծի փոխարինման արդյունքում կրճատվել են շահագործման ծախսերը, ապահովվել է վերոնշյալ ջրագծից սնվող բաժանորդների շարունակական ջրամատակարարումը:



### Գյուլագարակ համայնք



Գյուլագարակ գյուղի ջրամատակարարման սխեմա

### Ալափարս համայնք

● Գյուղի 23 փողոցում 50 մմ պոլիէթիլենային ջրագծի վրա փոխարինվել է 50 մ վթարված հատված, որի արդյունքում բարելավվել է վերը նշված փողոցի ջրամատակարարումը և խնայվել 0,1 լ/վ ջրաքանակ:

● Գյուղի ջրամատակարարումը բարելավելու նպատակով կառուցվել է 100 մմ 26 մ նոր ջրագիծ, ինչի շնորհիվ տնտեսվել է 0,4 լ/վ ջրաքանակ և ցանցի այդ հատվածում վերացել են հաճախակի կրկնվող վթարները:



Ալափարս գյուղի ջրամատակարարման սխեմա



## Մարագյուղ համայնք

● Առաջին փողոցում հաճախակի կրկնվող վթարների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ քայքայվել է տեղի 110 մմ պոլիէթիլենային խողովակի հատվածը: Այն նորով փոխարինելու արդյունքում խնայվել է 0,7 լ/վ ջրաքանակ, և ցանցում բարձրացել է ջրի ճնշումը:



Մարագյուղի ջրամատակարարման սխեմա

## Բավրա համայնք



Բավրա գյուղի ջրամատակարարման սխեմա

● Համայնքի դպրոցի մոտակայքում պարբերաբար հանդիպող ջրիագծի վթարի վերացման նպատակով փոխարինվել է 100 մմ պողպատե ջրագծի վթարված հատվածը, իսկ տնտեսված 0.4 լ/վ ջրաքանակն ուղղվել է տեղի ջրամատակարարման բարելավմանը:

## Մայիսյան համայնք

● Գյուղում խցափակման միջոցով շահագործումից հանվել է 50 մմ 40 մ պողպատե քայքայված խողովակ, որի շնորհիվ խնայվել է 0,7 լ/վ ջրաքանակ, և ցանցում բարձրացել է ջրի ճնշումը:



գ. Մայիսյան ջրամատակարարման սխեմա

Դեկտեմբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարած աշխատանքները հակիրճ նկարագրվում են ստորև ներկայացված Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավորը	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1,234
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	30,075
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	15,800
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	2,620
Ջրաչափական հանգույններ ուսուժաստիություն, սխեմաների կազմում	հատ	55
Շահագործումից հանված ջրագիծ	մ	4,301.7
Կառուցված ջրագիծ	մ	5,106.6
Կառուցված կոյուղագիծ	մ	306
Վերացված գաղտնի վթարներ	հատ	30
Փոխարինված փական	հատ	253
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	464
Մաքրված դիտահոր	հատ	412
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	30
<i>Վերացված վթարներ</i>		
Ջրամատակարարման ցանցում	հատ	1,938
Ջրահեռացման ցանցում	հատ	3,985
Պոմպակայաններում	հատ	127
Մաքրված անձրևընդունիչ	հատ	510

Դեկտեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2՝ Վերացված վթարների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամաս	Պոլիէթիլենային խողովակներ	Մետաղական խողովակներ	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
1	Արաբկիր	2	33	0
2	Զեյթուն	2	47	0
3	Մաշտոց	1	28	0
4	Շահումյան	2	59	0
5	Ալավերդի	8	31	0
6	Բերդ	7	6	0
7	Նոյեմբերյան	9	9	0
8	Իջևան	7	18	0
9	Ստեփանավան	2	21	0
10	Տաշիր	17	2	0
11	Ապարան	5	10	0
12	Լոռի	52	44	0
13	Շիրակ	64	66	0
14	Արթիկ	34	14	0
15	Սյուխակ	1	22	0
16	Թալին	3	3	0
17	Աշոցք	3	11	0
18	Էջմիածին	18	39	0
19	Աշտարակ	10	14	0
20	Հրազդան	6	5	0
21	Չարենցավան	6	12	0
22	Աբովյան	4	9	0
23	Կենտրոն	3	60	10
24	Հյուսիս	0	76	18
25	Հարավ	13	55	14
26	Էրեբունի	6	118	15
27	Արմավիր	23	142	65
28	Արտաշատ	85	45	36
29	Արարատ	50	71	28
30	Մասիս	40	25	18
31	Գավառ	13	45	36
32	Սևան	14	33	23
33	Սարտունի	0	14	0
34	Վարդենիս	0	13	9
35	Ճամբարակ	0	7	4
36	Դիլիջան	11	43	30
37	Վայք	1	8	8
38	Եղեգնաձոր	5	19	14
39	Ջերմուկ	0	1	0
40	Սիսիան	13	34	26
41	Գորիս	1	29	19
42	Կապան	9	36	15
43	Մեղրի	4	7	5
	Ընդամենը	554	1,384	393

Վերոնշյալ աղյուսակը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակահատվածում գրանցված 1,938 վթարների 26 %-ը վերաբերում է Երևանին, իսկ 74 %-ը՝ մարզերին, ընդ որում

- Երևանում գրանցված 505 վթարների 6%-ը կազմում են պոլիէթիլենային, իսկ 94 %-ը՝ մետաղական խողովակների վրա տեղի ունեցած վթարները:
- մարզերում գրանցված 1,433 վթարների 37%-ը կազմում են պոլիէթիլենային, իսկ 63 %-ը՝ մետաղական խողովակների վրա տեղի ունեցած վթարները:



## 1.2. ՋՐԱԶԱՓԵՐԻ ՓՈՆԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է դեկտեմբեր ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3՝ Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ								
	15	20	25	32	40	50	100	200	Ընդամենը
ՏՏեղադրված	124	31	4	1	0	7	2	1	170
Փոխարինված	85	24	2	1	1	0	0	0	113
Տեղափոխված	69	1	0	0	0	0	0	0	70
Տեխ. Ակտ	71	34	1	2	0	3	0	0	111
Ընդամենը	349	90	7	4	1	10	2	1	464

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-200 մմ տրամաչափի 464 ջրաչափ: Կատարված աշխատանքների 75 %-ը վերաբերել է 15 մմ, իսկ մոտ 20%-ը՝ 20 մմ ջրաչափերին:


### 1.3. ԶՐԱՅԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Դեկտեմբեր ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում
		մ	հատ	հատ
1	Արարկիր	7	226	0
2	Մաշտոց	2,245	249	105
3	Շահումյան	2,520	193	15
4	Զեյթուն	550	304	0
5	Ալավերդի	1,070	62	0
6	Ապարան	0	32	0
7	Աշոցք	0	6	3
8	Սպիտակ	0	17	0
9	Բերդ	180	12	0
10	Ստեփանավան	2,775	28	33
11	Արթիկ	270	84	0
12	Լոռի	2,571	204	4
13	Նոյեմբերյան	34	27	0
14	Տաշիր	245	8	0
15	Թալին	0	10	0
16	Շիրակ	550	552	0
17	Իջևան	580	30	20
18	Էջմիածին	0	166	0
19	Չարենցավան	1,000	109	0
20	Աբովյան	885	69	0
21	Հրազդան	2,195	18	0
22	Աշտարակ	1,550	60	0
23	Կենտրոն	1,520	336	9
24	Հյուսիս	2,140	246	20
25	Հարավ	400	389	6
26	Էրեբունի	650	145	2
27	Արմավիր	2,990	106	0
28	Արտաշատ	1,595	81	6
29	Արարատ	1,940	62	0
30	Մասիս	1,472	50	0
31	Գավառ	140	42	0
32	Սևան	3,640	72	0
33	Մարտունի	0	19	12
34	Վարդենիս	0	7	0
35	Ճամբարակ	0	12	0
36	Դիլիջան	180	35	54
37	Վայք	610	11	0
38	Եղեգնաձոր	0	6	0
39	Ջերմուկ	0	27	0
40	Սիսիան	0	97	0
41	Գորիս	50	30	2
42	Կապան	500	54	15
43	Մեղրի	0	37	0
	Ընդամենը	37,054	4,330	306

Վերոնշյալ աղյուսակը ցույց է տալիս, որ հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր առմամբ կատարված աշխատանքների 29 %-ը վերաբերում է Երևանին, իսկ 71 %-ը՝ մարզերին:




### 1.4. ԿԵՂՏԱԶՋՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՅԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալները.

- Մարտունի ԿՄԿ-ում խափանվել էր կոնվեյերների աշխատանքը: Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ խողովակի միջով անցնող մալուխները զստվել են: Բոլոր մալուխները դուրս են բերվել խողովակից և վերանորոգվել են, իսկ մի մասը փոխարինվել են նոր մալուխներով: Կատարվել է նաև բոլոր սարքավորումների զննում և կարգաբերում:

- Գավառ ԿՄԿ-ում յուղի պոմպը խցանվել էր, և կեղտաջրից գտված յուղն անհնար էր մղել կոնտեյներ: Այն ապամոնտաժվել է, մաքրվել և քսայուղվել, որի արդյունքում պոմպն աշխատում է բնականոն ռեժիմով: Ապամոնտաժվել են նաև օդամուղները, ստուգվել են ռոտորի ածխե թիակների մաշվածությունը ու օդի ֆիլտրերը:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են թե՛ էլեկտրական, թե՛ մեխանիկական սարքերը, կատարվել են կարգավորումներ: Մտորն Աղյուսակ 5-ում ներկայացված են մանրամասներ:




Աղյուսակ 5՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	62,943	21.6
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	78,991	25.2
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	157,021	7.2
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	112,346	9.5
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	113,874	9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	15,176	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	7,108	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	9,800	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	13,700	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

Վարդենիս ԿՊ-ի Wilo մակնիշի պոմպի բանվորական անհիվը խցանվել էր տեղից խախտվելու պատճառով, ինչպես նաև առանցքակալներից աղմուկ կար: Խնդրի կարգավորման նպատակով պոմպն ապամոնտաժվել է, նորոգվել է բանվորական անհիվը և փոխարինվել են առանցքակալները, ինչի արդյունքում պոմպն աշխատում է անխափան:

Ջերմուկ ԿՄԿ-ում այրվել էր օդամուղի շարժիչը: Այն ապամոնտաժվել և ուղարկվել է վերանորոգման: Փոխարինվել է նաև առանցքակալը, և այժմ պոմպն աշխատում է բնականոն ռեժիմով:





## 1.5. ԷՆԵՐԳԱՅԱՍԱԿԱՐԳ


Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6՝ Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

h/h	Հասցեն	Աշխատանքների նկարագիրը
1	Հ.Քոչար 18շ	Պոմպի աշխատանքի կարգավորում
2	Սունդուկյան 17 - 27	Էլ. սարքերի զննում կարգավորում
3	Երզնկյան 2,4	Պոմպի աշխատանքի կարգավորում
4	Ա.Ավետիսյան 67	Պոմպի աշխատանքի կարգավորում
5	Բաղրամյան 70	Պոմպի աշխատանքի կարգավորում
6	Բաղրամյան 1 նրբ. 14շ	Էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում 1 հատ,(1h ավտոմատիկայի կառավարիչ, 1h լիսեռ )
7	Վրացական 6	Էլ. սարքերի զննում կարգավորում
8	Տոլբուխին 34	Պոմպի աշխատանքի կարգավորում
9	Օրբելի 8	բարձր ճնշման ռելեի նորոգում 2 հատ,(1 մեմբրան 500լ )
10	Ա. Խաչատրյան 6	Պոմպի աշխատանքի կարգավորում
11	Փափազյան 13	Էլ. սարքերի զննում կարգավորում
12	Ա.Խաչատրյան 26	Պոմպի աշխատանքի կարգավորում
13	Սունդուկյան 1	Պոմպի աշխատանքի կարգավորում
14	Թբիլիսյան 35/1	Էլ. թողարկիչի նորոգում 1 հատ,(1 ավտոմատիկայի կառավարիչ,1 լիսեռ )
15	Բարբոյուսի 63	Պոմպի աշխատանքի կարգավորում
16	Կոմիտասի 58 - 21(Ն.Տիգրանյան 7)	Պոմպի աշխատանքի կարգավորում
17	Կիկյան 4/2	Պոմպի աշխատանքի կարգավորում
18	Շահումյանյան 8/1 - 27	Էլ. սարքերի զննում կարգավորում
19	Տոլբուխին 34	Էլ. թողարկիչի նորոգում 1 հատ,1 թերմոռելե,1 վերանորոգման հավաքածու
20	Համբարձումյան 42	Էլ. սարքերի զննում կարգավորում
21	Գրիբոյեդով 2	Պոմպի աշխատանքի կարգավորում
22	Քոչար 13	Պոմպի աշխատանքի կարգավորում
23	Մամիկոնյանց 23	Պոմպի աշխատանքի կարգավորում
24	Բարսեղյան 43	Պոմպի աշխատանքի կարգավորում
25	Արաբկիր 39փող. 2շենք	Պոմպի աշխատանքի կարգավորում
26	Աղբյուր Սերոբ 11ա	Պոմպի աշխատանքի կարգավորում
27	Փափազյան 11	Պոմպի աշխատանքի կարգավորում
28	Աղբյուր Սերոբ 10 շ	Պոմպի աշխատանքի կարգավորում
29	Արաբկիր 39փ 2շ	Էլ. թողարկիչի նորոգում 1 հատ, բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ,(1h ֆազի բացակայության ռելե )
30	Հ.Քոչար 13	Էլ. սարքերի զննում կարգավորում
31	Դեմիրճյան 33 - 55	Պոմպի աշխատանքի կարգավորում
32	Զեյթուն 8-րդ փ. 2շ	Պոմպի աշխատանքի կարգավորում
33	Ռուբինյանց 24	Պոմպի աշխատանքի կարգավորում
34	Ռուբինյանց 23	Պոմպի աշխատանքի կարգավորում
35	Ազատության 6	Էլ. սարքերի զննում կարգավորում
36	Ռուբինյանց 24	Պոմպի աշխատանքի կարգավորում
37	Ռուբինյանց 23 - 22	Պոմպի աշխատանքի կարգավորում
38	Դրոյի 24/1	բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ,(ռետինե խողովակ միացման դետալներով,1 մանոմետր )
39	Ազատության 6 - 34	Պոմպի աշխատանքի կարգավորում
40	Ռուբինյանց 24	Պոմպի աշխատանքի կարգավորում
41	Դրո28 - 47	Պոմպի աշխատանքի կարգավորում
42	Ա. Տիգրանյան 3 - 46	Պոմպի աշխատանքի կարգավորում, Էլ. թողարկիչի նորոգում 0 հատ

h/h	Պոմպակայանների հասցեն	Աշխատանքների հակիրճ նկարագիրը
43	Ռուբինյանց 24	Պոմպի աշխատանքի կարգավորում
44	Ազատության 6	Պոմպի աշխատանքի կարգավորում
45	Թբիլիսյան նրբ 1 և 2Շ	Պոմպի աշխատանքի կարգավորում
46	Ազատության 6 - 34	Պոմպի աշխատանքի կարգավորում
47	Էստոնական 12/1 - 129	Պոմպի աշխատանքի կարգավորում, (1հետադարձ փական, 1 խցուկ )
48	Աբեյյան 17	Պոմպի աշխատանքի կարգավորում
49	Լենինգրադյան 48/2	Պոմպի աշխատանքի կարգավորում
50	Լենինգրադյան 52 - 127	Պոմպի աշխատանքի կարգավորում
51	գ. Պոռշյան 5Փ 18ՆԸԲ 27/1S	Էլ. սարքերի զննում կարգավորում, Պոմպի աշխատանքի կարգավորում
52	Նորաշեն թաղ.	Էլ. հոսանքի լարերի նորոգում երկ=0 մ
53	Առաքելյան 70	Պոմպի աշխատանքի կարգավորում
54	մ. Կոտայք ք. Աբովյան տեղամաս	Էլ. սարքերի զննում կարգավորում
55	մ. Կոտայք գ. Ակունք	( մակարդակաչափի մալուխի վերանորոգում )
56	մ. Կոտայք ք. Աբովյան վարչական շենք	Էլ. սարքերի զննում կարգավորում
57	մ. Արմավիր ք. Էջմիածին	Պոմպի աշխատանքի կարգավորում
58	մ. Արմավիր ք. Էջմիածին Վաղարշապատ թաղ	Էլ. սարքերի զննում կարգավորում, (1հ ժամանակի ռելե )
59	Էջմիածին Չարենց 5Շ ԲՆ 8	Պոմպի աշխատանքի կարգավորում, Աշխատանքը կատարվել է “Հորիզոն ԱՊԸ”-ի կողմ
60	գյուղ Կոշ	Էլ. սարքերի զննում կարգավորում
61	գյուղ Կոշ պ/կ	Պոմպի աշխատանքի կարգավորում
62	մ. Կոտայք. Սոլակ	Էլ. սարքերի զննում կարգավորում
63	մ. Կոտայք. Սոլակ	Պոմպի աշխատանքի կարգավորում
64	մ. Կոտայք. Չարենցավան 4փ 13շ	Պոմպի աշխատանքի կարգավորում
65	մ. Կոտայք. Սոլակ պ/կ	Պոմպի աշխատանքի կարգավորում
66	մ. Կոտայք գ. Քաղսի	Պոմպի աշխատանքի կարգավորում, (3 առանցքակալ )
67	մ. Կոտայք գ. Քաղսի	Պոմպի աշխատանքի կարգավորում
68	ԲԱՖՖՈՒ 45 - 50 (Բ-1 -97շ)	Էլ. սարքերի զննում կարգավորում, Բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, (1հ ֆազի բացակայության ռելե )
69	Լուկաշին ՕԿՁ	Էլ. սարքերի զննում կարգավորում, (Էլ. մալուխի փոխում )
70	Զ. Անդրանիկի թաղ 58 - 54 (Բ-1 -97շ)	Պոմպի աշխատանքի կարգավորում
71	Սեբաստիա 141/1	Պոմպի աշխատանքի կարգավորում
72	Տիչինայի 34	Պոմպի աշխատանքի կարգավորում
73	Լուկաշին ՕԿՁ	Էլ. սարքերի զննում կարգավորում, (Հաշվիչի փոխում )
74	Տիչինա փ. հոսքաչափ	Էլ. սարքերի զննում կարգավորում
75	Տիչինա փ. հոսքաչափ	Էլ. հոսանքի լարերի նորոգում երկ=0 մ
76	Գ. Մերձավան	Պոմպի աշխատանքի կարգավորում, Էլ. սարքերի զննում կարգավորում, Աշխատանքը կատարվել է “Հորիզոն ԱՊԸ”-ի կողմ
77	Արամուս պ/կ	Պ/կ-ում էլ. հաշվիչի տեղադրում (CTEM-3BR)
78	Վ. Խարբերդ ՕԿՁ	Պ/կ-ում էլ. հաշվիչի տեղադրում (CTEM-3BR), եռաֆազ 32Ա անջատիչի փոխարինում
79	Շիրակի 56/1	32Ա ավտոմատ անջատիչի փոխարինում
80	Մանանդյան 1/3	Վնասված էլ. մալուխի նորոգում
81	Բեռնակիրների 85ա	Կատարվել է հաղորդալարերի մոնտաժ
82	Սևան տեղամաս	Կատարվել է հաղորդալարերի մոնտաժ, տեղադրվել է 4 հատ LED 40W լուսատու և 1 հատ 63Ա եռաֆազ անջատիչ
83	Վեդի տեղամաս	Տեղամասի մասնաշենքում տեղադրվել է 3 հատ 63Ա ավտոմատ անջատիչ
84	Արին Բերդ ՕԿՁ	Զրամբարի զսասված մալուխի փոխարինում
85	Վ. Շենգավիթ 2 փող 20/1	21/2 BT CP փականի և 65 մմ մետաղական կարճախողովակների տեղադրում էլ. եռակցումով





## 1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԳՄԱՆԵՐ

Դեկտեմբերին իրականացվել են մեքենա-մեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել և պատրաստվել են հետագա շահագործման համար:



Ընդհանուր առմամբ աշխատանքներ են կատարվել 156 մեքենա-մեխանիզմի վրա՝ տարբեր ընթացային մասերի փոխարինում նորերով, շարժիչի նորոգում, առջևի և հետևի համակարգերի նորոգում: Փոխարինվել են շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, գտիչներ և անտիֆրիզ, անվադողեր և մարտկոցներ:

Հատկանշական է, որ նշված 156 մեքենա-մեխանիզմներից՝

- 17-ը (11 %)՝ հատուկ մեքենա-մեխանիզմներ են,
- 50-ը (32 %)՝ բեռնատարներ, իսկ
- 89-ը (57 %)՝ մարդատարներ:

Կատարված աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, ինչը նպաստում է համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները ժամանակին վերացնելու խնդրի լուծմանը:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ





## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: Գործընթացի առավել աղյուսավետ կազմակերպման համար ԵՏՍՍ-ում ներգրավվել են 184, իսկ ՄՏՍՍ-ում՝ 132 պայմանագրային աշխատակից: 01.01.2019 թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՍ-ում՝ 252,781, իսկ ՄՏՍՍ-ում՝ 186,218 պայմանագիր:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	2018թ. հունվար - դեկտեմբեր ամիսներին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	361,827	243,259	67%
		Իրավաբանական անձ	17,044	9,522	56%
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	254,054	179,340	71%
		Իրավաբանական անձ	9,998	6,878	69%
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	615,881	422,599	69%
		Իրավաբանական անձ	27,042	16,400	61%

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները դեկտեմբեր ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	397,665	304,444	77%
		Իրավաբանական անձ	20,156	14,394	71%
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	314,315	191,418	61%
		Իրավաբանական անձ	12,317	7,602	62%
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	711,980	495,862	70%
		Իրավաբանական անձ	32,473	21,996	68%

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): ԵՏՍՍ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 573 նոր բաժանորդներ, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 201 նոր բաժանորդ:

## 2.2. ՀԱՍՈՒՅԹ


Սպառման ծավալների ավելացման նպատակով շարունակվում են կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև ԵՏՍՍ-ի «Շենգալիթ», «Հյուսիս», «Շահումյան» և ՄՏՍՍ-ի «Լոռի», «Շիրակ» տեղամասերի սպասարկման տարածքների բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը:


Բոլոր փոխարինված ջրաչափերն ուղարկվում են լաբորատոր ստուգաչափման: Դեկտեմբեր ամսվա ընթացքում ԵՏՍՍ-ում ստուգաչափվել է 378, իսկ ՄՏՍՍ-ում՝ 660 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	12.2018թ. ստուգաչափված ջրաչափերի քանակ			Ընդամենը
			Սարքին	Անսարք	Միջամտած	
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	155	136	49	340
		Իրավաբանական անձ	12	22	4	38
		Ընդամենը	167	158	53	378
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	277	252	82	611
		Իրավաբանական անձ	24	21	4	49
		Ընդամենը	301	273	86	660

Ստուգաչափված ջրաչափ (Երևան)



Ստուգաչափված ջրաչափ (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել 206,028 մ<sup>3</sup> վերահաշվարկված հասույթ:


Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2018թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ (Երևան)





Հասույթ (Մարզեր)




Դեկտեմբերին ընկերության առևտրային տնօրինությունների կողմից ձևավորած հասույթի առաջադրանքի կատարողական ցուցանիշները բերված են ստորև աղյուսակի տեսքով.


Տարածաշրջան	Առաջադրանք հազ.մ²	Փաստացի հազ.մ²	Տարբերություն %, հազ.մ²
Երևան	6,747	6,275	-7.00
Մարզեր	3,691	2,883	-21.88
Ընդամենը	10,438	9,158	-12.26

Ստորև բերված գրաֆիկում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալների վերաբերյալ տվյալները.

Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Երևան)



Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Մարզեր)



### 2.3. ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Դեկտեմբեր ամսին գանձումը ԵՏՍՍ-ում կազմել է 1,352,195 դրամ (68 %), իսկ ՄՏՍՍ-ում՝ 646,630 դրամ (32 %):

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

Ընկերության ձևավորված հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Գանձում	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս
Երևան	Առաջադրանք	1,145,130	1,136,846	1,124,295	1,092,631	1,164,996	1,256,334	1,271,520
	Հավաքագրում	809,156	950,219	1,113,310	961,906	1,171,895	1,173,069	1,194,706
	%	70.66%	83.58%	99.02%	88.04%	100.59%	93.37%	93.96%
Մարզեր	Առաջադրանք	485,310	471,395	415,475	464,364	443,557	481,998	481,998
	Հավաքագրում	404,088	443,632	490,015	476,166	520,132	501,615	507,621
	%	83.26%	94.11%	117.94%	102.54%	117.26%	104.07%	105.32%
Ընդամենը	Առաջադրանք	1,630,440	1,608,241	1,539,770	1,556,995	1,608,553	1,738,332	1,753,518
	Հավաքագրում	1,213,244	1,393,851	1,603,325	1,438,073	1,692,027	1,674,685	1,702,327
	%	74.41%	86.67%	104.13%	92.36%	105.19%	96.34%	97.08%

Տարածաշրջան	Գանձում	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը
Երևան	Առաջադրանք	1,428,482	1,447,844	1,384,746	1,339,214	1,217,529	15,009,567
	Հավաքագրում	1,401,559	1,284,149	1,317,617	1,481,184	1,352,195	14,210,965
	%	98.12%	88.69%	95.15%	110.60%	111.06%	94.68%
Մարզեր	Առաջադրանք	621,594	585,570	595,888	602,624	515,592	6,165,365
	Հավաքագրում	618,309	535,951	594,117	631,616	646,530	6,369,792
	%	99.47%	91.53%	99.70%	104.81%	125.40%	103.32%
Ընդամենը	Առաջադրանք	2,050,076	2,033,414	1,980,634	1,941,838	1,733,121	21,174,932
	Հավաքագրում	2,019,869	1,820,100	1,911,735	2,112,800	1,998,725	20,580,761
	%	98.53%	89.51%	96.52%	108.80%	115.33%	97.19%

### 2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Տարածաշրջանների առևտրային տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Դեկտեմբեր ամսվա ընթացքում ԵՏՍՍ կողմից կնքվել է թվով 189 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 12.3 մլն դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՍ կողմից՝ թվով 54 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 7.97 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը՝ ըստ քանակի և գումարի:

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2018թ		Բավարարված		Մերժված		2017-2018 թթ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
2,816	749,908,505	1,885	158,469,483	49	3,610,108	2,859	742,878,171	940	79,503,365

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 67 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 2 %-ը մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.


Տարածաշրջան	Պարտքը 01.01.2019թ. դրությամբ (մլն. դրամ)	Այդ թվում դեկտեմբեր ամսվա հասույթ (մլն. դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	2,783.4	1,180.0
Բնակիչ-բաժանորդներ	1,880.2	761.6
Իրավաբանական անձեր	903.2	418.4
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	2,014.3	498.3
Բնակիչ-բաժանորդներ	1,667.7	370.9
Իրավաբանական անձեր	346.6	127.4
Ընդամենը, այդ թվում	4,797.7	1,678.3
Բնակիչ-բաժանորդներ	3,547.9	1,132.5
Իրավաբանական անձեր	1,249.8	545.8

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 142.9 մլն դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

2018թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Երևան)





## 2.5 ԶՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.01.2019 թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	388,623	302,604	78%	19,632	14,391	73%
	Առանց ջրաչափի	9,042	1,840	20%	524	3	1%
Մարզեր	Ջրաչափով	285,665	186,224	65%	11,917	7,599	64%
	Առանց ջրաչափի	28,650	5,194	18%	400	3	1%
Ընդամենը	Ջրաչափով	674,288	488,828	72%	31,549	21,990	70%
	Առանց ջրաչափի	37,692	7,034	19%	924	6	1%

Տվյալների բազայում 01.12.2018թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	514,118	273,296	53%	22,347	4,328	19%
Մարզեր	332,636	84,108	25%	14,019	2,293	16%
Ընդամենը	846,754	357,404	42%	36,366	6,621	18%

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով: Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 2,117, իսկ մարզերում՝ 1,564 ջրաչափական սարք: Այդ թվում՝ ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում



ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 87, իսկ ՄՏՄՏ սպասարկման տարածքում՝ 433 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Դեկտեմբեր ամսին ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են կատարվել թվով 10 հասցեներում, որտեղ առկա 5,073 ջրաչափից փոխարինվել է 2,357 ջրաչափ (մոտ 46.5 %):

### Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիր

Հասցե	Ջրաչափերի ընդանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
ք.Վանաձոր, Իսահակյան	663	458	69.1%
ք.Վանաձոր, Իսահակյան 1 նրբ.	243	187	77.0%
ք.Վանաձոր, Իսահակյան 2 նրբ.	116	85	73.3%
ք.Վանաձոր, Ավետիսյան	121	50	41.3%
ք.Վանաձոր, Աղայան	507	414	81.7%
ք.Վանաձոր, Պ.Մևակի	163	108	66.3%
ք.Վանաձոր, Շինարարների	348	248	71.3%
ք.Վանաձոր, Ուսանողական	306	183	59.8%
գ.Գուգարք	430	166	38.6%
ք.Վանաձոր, Տավրոս	2,176	458	21.0%
ԸՆԴԱՄԵՆԸ	5,073	2,357	46.5%

«Լոռի» տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում տեղադրվել է 1,413, իսկ «Շիրակ» տեղամասի սպասարկման տարածքում՝ 1,410 ջրաչափական սարք:

## 2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՅՈՒՄ


Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	147	75,396	12,772,558
Սարգեր	139	43,785	7,086,982
Ընդամենը	286	119,181	19,859,540

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՈՒՆ







### 3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՈՒՆԿԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ





Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված են Երևան քաղաքի դեկտեմբեր ամսվա շարունակականության տվյալները՝ 98.3 %, որոնք 0.1 %-ով ավել են նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ: Դեկտեմբեր ամսից սկսել է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն (Երևան)



Հաշվետու ամսվա ընթացքում շահագործման տարածաշրջանների տնօրինություններում թվով 43 ՃԿՓ-ների վրա տեղադրվել են ճնշման լոգերներ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ՃԿՓ-ներից 7-ն անսարք են: Անսարքությունները վերացվել են համապատասխան ստորաբաժանման կողմից: Ստորև ներկայացված են որոշ կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լոգերների գրաֆիկները:








### 3.2. ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 32,813 կՎտ/ժ (5.95 %)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 155 հասցե. թերություններ չեն հայտնաբերվել:


● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 5,333 կՎտ/ժ կամ 17 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին




● Շիրակ քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության շնորհիվ էլ. էներգիայի ծախսը նվազել է 2,523 կՎտ/ժ կամ 7 % անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

*Շիրակ*



● Դեկտեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 68,080 կՎտ/ժամ կամ 10,86 % անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա*




Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 86,369 կՎտ/ժամ կամ 4.28 % անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա*



Ընդհանուր էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 152,548 կՎտ/ժ կամ 7,31 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*Ընկերության կողմից սպառած էլ. էներգիա*



**3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

● Շահագործման տեղամասերի ինժեներների կողմից ներկայացրած ջրամատակարարման և ջրահեռացման ցանցում կատարած աշխատանքների համակարգում, համապատասխան գծագրերի կազմում և մուտքագրում ԱՏ համակարգ:

- Ջրագծերի թարմացում՝ լրացուցիչ տեղեկությունների հիման վրա:
- «Բնտերակտիվ» համակարգում տեղամասերի մասնագետ-տեսուչների հետ իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում: Հավաքագրված տեղեկատվության ներմուծում ԱՏ համակարգ և փոխանցում առևտրային տնօրինությանը՝ բաժանորդների տվյալների բազայի թարմացման նպատակով:
  - ▶ 109 ֆիզիկական բաժանորդի և 25 իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում Երևան քաղաքում
  - ▶ 26 իրավաբանական բաժանորդների և 109 ֆիզիկական բաժանորդների ավելացում տվյալների բազա
  - ▶ Բազայում ավելացվել են նոր բաժանորդ կետեր՝ 178 ֆիզիկական և 40 իրավաբանական նոր կետեր:

● Autocad ծրագրով պատրաստվել է Վարդենիսի Սուրբ Վարդանի ջրաղբյուրների աշխատանքային գծագիրը:

● Կատարվել է ընկերության կողմից սպասարկվող տարածքներում տեղակայված բաժանորդների տեղադիրքերի ճշտում և կոդավորում, ինչպես նաև վերլուծություն լոգեր գոնանների և յուրաքանչյուր կետի բարձրության որոշման համար: Այս աշխատանքները դեռ ընթացքի մեջ են:

- Բազմաբնակարանային և սեփական սեկտորներում կատարվել է բաժանորդ կետերի մշակում և տրվել են կոդեր՝
  - ▶ 58,578 բազմաբնակարանային սեկտոր
  - ▶ 3,599 սեփական սեկտոր:

● Ընթացքի մեջ են սեփական իրավաբանական բաժանորդների խմբավորման և լրացման աշխատանքները (ըստ սպասարկման տարածքի, լոգերի և լոգեր գոնայի, ժամային գրաֆիկի): Կատարվում են նաև լոգերի կոորդինատի և բաժանորդների (ID-ի) կոորդինատների ստացում և խմբավորում ըստ հասցեի:

- 27.12.2018 թ. դրությամբ մշակվել է 110 բաժանորդ կետ:
- «Մեծ Մասենի» ՄՊԸ-ի նախկինում կատարած աշխատանքների տվյալների հիման վրա կատարվել է նախկին «Հայջրմուղկոյուղու» սպասարկման տարածքի ջրատարների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և տեղադրում ճիշտ աշխարհագրական դիրքով GIS, Autocad ծրագրերի ձևաչափով:



### 3.4. ԿԱՐԳԱՎԱՐՄԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու ամսում կարգավարների խումբը SCADA և LOCATOR համակարգերի միջոցով առցանց կառավարել և հետևել է ընկերության սպասարկման տարածքում առկա պոմպային ագրեգատների անխափան աշխատանքին, ջրամբարների լցվածությանը, ճնշումային լոգերներին, ջրաչափական սարքերի աշխատանքին և բաշխիչ ցանցի ջրում առկա մնացորդային քլորի համապատասխանությանը սահմանված չափաբաժնին:




Ստորև ներկայացվում է տեղեկատվություն երկու խոշոր վթարների մասին:

● «Վայք» քաղաքը սնուցվում է «Հեր-Հեր» աղբյուրի 2 ջրատարների միջոցով: Առաջին ջրատարի ջրաքանակը տարվա այս եղանակին սովորաբար կազմում է 16 լ/վ, իսկ երկրորդ ջրատարով հոսող ջրաքանակը՝ 82 լ/վ: Վթարի հայտնաբերման ժամանակ 2-րդ ջրատարով հոսող ջրաքանակն ավելացել էր՝ հասնելով 92 լ/վ-ի: Այդ մասին տեղեկացվել էր «Վայք» ՇՏ-ի պետը: Վթարի ստույգ վայրը հայտնաբերվել էր տեղամասի աշխատակիցների կողմից:

Վթարի պատճառ էր հանդիսացել ավտոճանապարհային շինարարի կողմից թրթուրավոր շարժասարքով ջրատարի պատահական փաստումը: Վթարավերականգնողական աշխատանքներ կատարելու համար հայտարարվել էր վթարային ջրանջատում, այնուհետ «Հեր-Հեր» աղբյուրից բացվել էր 2-րդ ջրատարի ջրթափ փականը: Ձողման աշխատանքները կատարելուց հետո ջրամատակարարումը վերականգնվել էր:


Ստորև ներկայացված է «Հեր-Հեր» 2-րդ աղբյուրից հոսող ջրաքանակը ֆիքսող ջրաչափի գրաֆիկական պատկերը.



● «Արին Բերդ» ՕԿՁ-ից դեպի Էրեբունի հրապարակ մղվող ջրատարի վրա տեղադրված ճնշման լոգերից ստացված տվյալներից հնարավոր է որոշել տվյալ տարածքում ջրամատակարարման գրաֆիկին համապատասխան ժամին (05:00-24:00) գրանցված ջրի ճնշման բարձրությունը: Ցուցիչից ստացված տվյալից պարզվել էր, որ այդ ջրատարի վրա վթար էր առաջացել, քանի որ ճնշման բարձրությունը կտրուկ նվազել էր: Այդ մասին տեղեկացվել էր «Էրեբունի» ՇՏ-ն, որի աշխատակիցների կողմից պարզվել էր վթարի ստույգ վայրը: Հայտարարվել էր վթարային ջրանջատում, որից հետո «Արին Բերդ» ՕԿՁ-ից դեպի տվյալ ուղղությամբ մղվող ջրատարի վրայի փականը փակվել էր, դադարացվել էր ջրամատակարարումը, որից հետո կատարվել էին վթարավերականգնողական աշխատանքներ: Աշխատանքն ավարտելուց հետո ջրամատակարարումը վերականգնվել էր:

Ստորև ներկայացված է «Էրեբունի հրապարակ» ճնշման տվյալից ստացված տվյալների գրաֆիկական պատկերը.





### 3.5. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

#### Քաղաք Երևան

● «Արվյան պուրակ» ՕԿՁ-ի տարածքում, քաղաքաշինական նպատակներից ելնելով, անհրաժեշտություն է առաջացել շրջանցել Արգնի 1-Արվյան պուրակ ջրատարի հատվածը: Ջրատարի կանգառը կազմակերպվել և աշխատանքները բարեհաջող ավարտին են հասցրել ՋՀԿ խմբի աշխատակիցները:

#### Ղազարավան

● Ղազարավանի ինքնահոս 600 մմ տրամագծով թուջե ջրատարի վրա տեղադրված BadgerMeter հոսքաչափը ճիշտ չէր աշխատում ջրատարի կիսալցվածության պատճառով: Ջրատարի վրա տեղադրվել է թիթեղ՝ արհեստական դիմադրություն ստեղծելու նպատակով: Արդյունքում ջրատարի հոսքաչափի հատվածը լցվել է ջրով, և հոսքաչափը սկսել է աշխատել:



#### Գառնի-Արտաշատ

● Գառնի-Արտաշատ ջրատարները քլորատան տարածք են հասնում 4 ջրագծով, որոնցից 3-ը մտնում են կոնտակտային ավազան և դուրս գալիս երեք 500 մմ խողովակներով: Վերջիններիս վրա տեղադրված են եղել «Взлет» տիպի հոսքաչափեր, իսկ չորրորդ թուջե խողովակն ուղղակի շրջանցում էր կոնտակտային ավազանը: Հոսքաչափերը չէին աշխատում խողովակների թերլցվածության պատճառով, բացի այդ, քլորը տրվում էր կոնտակտային ավազանի ամբողջ ջրաքանակի համար, որը մեծ չափաքանակ է քլորատնից հետո տեղակայված Բանավան թաղամասի համար: Հաշվետու ամսում կատարվել է թուջե 600 մմ ջրատարի գծային փականի խցափակում և ջուրը շրջանցող խողովակով ուղղվել է դեպի կոնտակտային ավազան: Կարգավորվել է հոսքաչափերի աշխատանքն ու քլորի չափաքանակը:

Կատարվել են նաև ջրատարների շրջայցեր, որոնց ընթացքում Գառնի-Արտաշատ ջրատարի վրա հայտնաբերվել է վթար՝ մոտ 10 լ/վ: Այս մասին տեղեկացվել է համապատասխան տեղամասը:



### Միսիան

Միսիան քաղաքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.




- Մուխութուրյան և Զույգաղբյուր կապտաժներից վերցվող ջրաքանակի հաշվառման և ջրատարի ընդհանուր ջրաքանակի հաշվառման նպատակներով ջրաչափերի տեղադրման հնարավորությունների ուսումնասիրություն, ինչպես նաև Մուխութուրյան-Գորիս ջրաչափի փոխարինումը նորով,

- ջրաքանակի չափումներ,
- Շաքեի ջրաղբյուրի ջրատարների վրա նոր տեղադրված հոսքաչափերի կարգաբերում:

**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ  
ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ**





#### 4.1. Համակարգչային ցանց

Դեկտեմբեր ամսվա ընթացքում համակարգչային ծառայության կողմից իրականացված հիմնական աշխատանքները ներկայացված են ստորև:

- Իրականացվել է Linux օպերացիոն համակարգով գործող բոլոր սերվերների թարմացում:
- Բոլոր վիրտուալ սերվերները, որոնք գործում էին երկու հին Dell T610 սերվերների վրա, տեղափոխվել են նոր սերվերների վրա, և այդ երկու սերվերներն անջատվել են հետագա սպասարկման, ծրագրային և համակարգային թարմացման և վերածրագրավորման համար՝ հետագա շահագործումը շարունակելու նպատակով:
- «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև տվյալների փոխանակման համար միացումը «Ռոստելեկոմ» կապուղիներից տեղափոխվել է «Յուրոմ» ՓԲԸ-ի կապուղիների վրա: Երևանի քաղաքապետարանի մասնագետների հետ միասին իրականացվել են բոլոր անհրաժեշտ կարգավորումները և փորձարկումները:

#### 4.2 Ինտերակտիվ համակարգ

- Նորագույն տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման խմբի կողմից կատարվել են մի շարք փոփոխություններ և թարմացումներ ինտերակտիվ և փաստաթղթաշրջանառության համակարգերում:
- Ինտերակտիվ համակարգի բաժանորդների համար նախատեսված միջավայրում կատարվել է ինտերֆեյսի ամբողջական փոփոխում:
- Տեխնիկական տնօրինության ռազմավարության և մշտադիտարկման վարչության ԱՏՀ խմբի հետ համատեղ մշակվում և ստեղծվում է տվյալների բազա ջրամատակարարման շարունակականությունը հաշվարկելու համար:
- Մի շարք թարմացումներ և լրացումներ են կատարվել ինտերակտիվ համակարգի Իրավաբանական վարչության համար նախատեսված բաժնում: Ավելացվել է ժամանակացույց ենթաբաժինը, որով հնարավոր է հսկել և կառավարել պարտքի մարման ժամանակացույցերը:
- Թարմացումներ և լրացումներ են կատարվել ինտերակտիվ համակարգի «Քարտեզներ» բաժնում: Ադապտացվել է նոր google map ստանդարտներին:
- Որոշ հաշվետվություններ են տրամադրվել ՋՏՊԿ-ին և ընկերության այլ ստորաբաժանումներին:


#### 4.3. Նոր սարքավորումներ և ծրագրեր

- Հաշվետու ամսվա ընթացքում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ Երևան և Վանաձոր քաղաքներում տեղակայված Ջրաչափերի ստուգաչափման լաբորատորիաների աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու համար ձեռք է բերվել համակարգիչ Երևանում ստուգաչափման ընթացքը տեսանկարահանելու համակարգի ամբողջականության համար, ինչպես նաև տեսահսկման համակարգ Վանաձորի լաբորատորիաների համար:



ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ





Դեկտեմբերին հանրային կապերի ծառայությունն աշխատեց հնարավորին արդյունավետ, օգտագործելով իր գործիքակազմի բոլոր միջոցները: Թերթերը, հեռուստատեսությունն ու ընկերության ֆեյսբուքյան էջն ակտիվորեն լուսաբանեցին ընկերության գործունեությունը: Թվում էր՝ համակարգում իրավիճակի կայունացման, մասնավորապես ջրամատակարարման ապահովման պայմաններում, ծառայության ծանրաբեռնվածությունը պետք է նվազի, սակայն վերջինս նույնիսկ որոշակիորեն ավելացավ:



Այստեղ զգալի դեր խաղաց դեկտեմբերի 4-ի ՀՀ վարչապետի պաշտոնակատար Ն. Փաշինյանի նախընտրական ելույթը Մասիս քաղաքում, որտեղ նա հստակ հայտարարեց իր դրական վերաբերմունքը Վեոյիա Ջրի նկատմամբ ու նշեց վերջինիս ունակությունը ստանձնած պարտավորությունների կատարման գործում: Ավելին, նա ասաց, որ ՀՀ կառավարությունը նույնպես ունի պարտավորություններ ընկերության առջև: Տվյալ հանգամանքի կարևորությունը վերջին ամիսներին ընկերության շուրջ ստեղծված ոչ բարենպաստ մթնոլորտի պայմաններում շատ դրական դեր կարող էր խաղալ: Դրա համար, հանրային կապերի ծառայությունն անմիջապես այդ հայտարարությունը ու տեսանյութը հրապարակեց ֆեյսբուքյան էջում ու սկսեց լայնորեն օգտագործել լրագրողների հետ հետագա շփումների ընթացքում:

Նման աջակցության պայմաններում, աշխատանքը ծավալեց ավելի համարձակ Վեոյիա Ջրի տեսակետը ներկայացնելու գործում: Այսպես, ինչպես հայտնի է, 2019 թ.-ից ջրի սակագինը բարձրացավ, բայց դրա կիրառումը հետաձգվեց մինչև 2025 թվական: Հաշվի առնելով այն, որ լրատվամիջոցները ոչ լիարժեքորեն պարզաբանեցին գործընթացը, ինչը հետագայում կարող էր հանրության շրջանում տարակարծությունների ու թյուրըմբռումների տեղիք տալ, մասնավորապես կարծիք ստեղծել առ այն, որ Վեոյիա Ջրի սակագնային հայտը հիմնավորված չէր, ինչպես նշում էին որոշ «փորձագետներ ու մասնագետներ», ծառայությունը ճիշտ համարեց հանրությանն ու համակարգի աշխատակիցներին հստակ ներկայացնել ընկերության տեսակետն ու դիրքորոշումը խնդրի առնչությամբ: Այս կապակցությամբ, պատրաստվեց և ՋԼՄ-ներին ու համակարգի աշխատակիցներին ի գիտություն ուղարկվեց համապատասխան մամուլի հաղորդագրություն:



Միևնույն ժամանակ շարունակվում էր ծառայության ամենօրյա գործունեությունը՝ իրականացնելով ինչպես նախատեսված ծրագրերը, այնպես էլ լուծելով առաջացող խնդիրները ու նշելով ընկերության համար կարևոր իրադարձությունները:

Այսպես, ընկերության ֆեյսբուքյան էջը, որպես 12000-13000 ընթերցող ունեցող տեղեկատվության աղբյուր, հրապարակեց ավելի քան մեկ տասնյակ ճյուղային տնօրինությունների տարածքային կառույցներից ստացված տարեվերջյան աշխատանքային զեկույցներ՝ հիմնականում 2018թ. ծրագրով նախատեսված բազմապիսի ծրագրերի ավարտի մասին: Իսկ այս ուղղությամբ աշխատանքի «մեխը»

հանդիսացավ զլխավոր տնօրենի պաշտոնակատար Գոռ Գրիգորյանի ծավալուն հոդվածը՝ անցնող տարվա ակնկալվող ցուցանիշների ու առաջընթացի մասին, որը նաև հրապարակվեց Հայաստանի Հանրապետություն, Իրավունք, Առավոտ, Հայկական ժամանակ ու Ժողովուրդ թերթերում: Նույն հաշվետվության ու պարզաբանման բնույթ կրեցին ընկերության «Արևմուտք» ՏՏ նախաձեռնությամբ իրականացված Գալա և երևանյան ՀՀ հեռուստաալիքների անդրադարձը Գյումրի քաղաքում ջրամատակարար-

ման բարելավման առաջընթացին, ինչպես նաև ՀՀ, Կենտրոն ու Երկիր Մեդիա հեռուստաալիքների ռեպորտաժը Իջևան քաղաքում իրականացված ծրագրերի մասին: Իսկ Սյունիքի Ջանգեգուր հեռուստաալիքի կողմից կազմակերպված ռեպորտաժը «Արևելք» ՏՏ մասնակցությամբ, նպատակ ունեւր պարզաբանել սպառողներին Կասպան քաղաքում

ջրանջատումների պատճառները: Պլանային աշխատանքներից առավել լայնորեն լուսաբանվեց Ջրային կոմիտեի, ՀՀ ՀՕԿՀ-ի, ՀԿ-ների ու ԶԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ ճանաչողական այցը Աշտարակում գտնվող Կենտրոնական կարգավարական ծառայություն, որտեղ հյուրերին ընդունեցին ու պարզաբանումներ տվեցին Վեոլիա Ջրի ղեկավարները: Թեմային անդրադարձան, մասնավորապես, Արմենիա, Կենտրոն, Երկիր Մեդիա, ՀՀ հեռուստաալիքները ու Հայաստանի Հանրապետություն պաշտոնաթերթը, այդ մասին մամուլի հաղորդագրությունը լուսանկարներով հրապարակվեց մի քանի այլ թերթերում, նաև ուղակվեց ԶԼՄ-ների և հրապարակվեց ֆեյսբուքյան էջում:

Օգտվելով առիթից, ծառայությունը միջնորդեց Հանրային հեռուստատեսության «Մոլորակ No 612» մանկական գիտա-հանրամատչելի հաղորդաշարին վերջինիս հերթական թողարկման մեջ խոսել խմելու ջրի որակի մասին: Այս առթիվ պատրաստվեց հաղորդում, որի մասնակիցներին սիրով հյուրընկալեցին ու պարզաբանումներ տվեցին ընկերության Երևանի որակի լաբորատորիայում: Իսկ հընթացս առաջացած թեմաներից կարելի է առանձնացնել Հանրային հեռուստաընկերության Լուրեր լրատվական ծառայության անդրադարձը ջրաչափերի փոխարինման գործընթացին: Առիթը ֆեյսբուքում հրապարակված ու զգալի հանրային արձագանք ստացած հաղորդագրությունն էր ջրաչափերի աշխատանքին սպառողների միջամտության ու դրանք նորերով փոխելու անհրաժշտության վերաբերյալ: Արդյունքում հեռուստաալիքը հեռարձակեց ընկերության համար փանգամայն ընդունելի բովանդակությամբ հաղորդում: Ծառայությունը չնոռացավ նաև ղեկտեմբերի 23-ը՝ «Կաթնաղբյուր-Երևան» ջրատարի շահագործման հերթական տարեդարձը նշել որպես Հայաստանում կենտրոնացված ջրամատակարարման համակարգի ստեղծման օր և այդ առթիվ շնորհավորանքներ հղել համակարգի աշխատակիցներին («Հայաստանի ջրմուղը՝ 107 տարեկան. ԶՐԱՎԱՃԱՆՏ՝ ՏՂԱՅԻՑ՝ SCADA ՀԵՌԱԿԱՆՍՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ»):

Այն հրապարակվեց ֆեյսբուքյան էջում՝ լուսանկարների ալբոմով հանդերձ և ուղարկվեց նաև ԶԼՄ-ներին: Բնականաբար, ղեկտեմբերին միջոցներ ձեռնարկվեցին Նոր տարին հավուր պատշաճի նշելու նպատակով: Սա շատ կարևոր էր նաև այն պատճառով, որ որպես հանրային ծառայություններ մատուցող կազմակերպություն պետք է օգտագործենք ցանկացած առիթ սպառողների հետ շփվելու, նրանց ևս մեկ անգամ մեր ներկայությունը հիշեցնելու ու գործի կարևորությունը նշելու համար: Այս կապակցությամբ պատրաստվեց ու ղեկտեմբերի 25-ից ՀՀ, Կենտրոն, Երկիր Մեդիա ու ՀՀ հեռուստաալիքներով ցուցադրվեց տեսահոլովակ՝ Վեոլիա Ջրի բարեմաղթանքներով սպառողներին Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ: Այն նաև տեղադրվեց Վեոլիա ջրի պաշտոնական էջում ու Youtube-ում:

Ամանորի թեման լուսաբանվեց նաև ֆեյսբուքյան էջում, որտեղ ի լրուճն նշված տեսահոլովակի, հաշվետու ամսվա երկրորդ կեսից շարունակաբար հրապարակվեցին Վեոլիա Գրուպի ձեռնարկություններից Բսպանիա, Իտալիա, Գերմանիա, Դանիա, Լեհաստան, ինչպես նաև Վեոլիա Ջրի համակարգից ու գործընկերներից ստացված շնորհավորական տեսահոլովակներն ու հաղորդագրությունները: Վերջակետը դրվեց ղեկտեմբերի 28-ին ծառայության կողմից շնորհավորական բացիկի հրապարակմամբ՝ 2019 թ.-ին սպառողների ու համակարգի աշխատակիցների հետ ֆեյսբուքում հանդիպելու ակնկալիքով:

Ընդ որում, դատելով էջի այցելուների քանակից, պետք է ասել, որ չնայած նախատոնական օրերի տրամադրությանն ու զբաղվածությանը, նշված հրապարակումները զգալի ակտիվություն ապահովեցին տարեվերջին, էջին բերելով նորանոր այցելուներ ու ապահովելով դրական մթնոլորտ ընկերության շուրջ:

**Veolia Ջուր Պաշտոնական էջ**  
 Գրադարակված է Myrad Capotech-ի կողմից (?) · 14 դեկտեմբերի, 2018 թ., ժամը 11:39ին ·

Հանրային հեռուստաալիքի «Լուրեր» ծրագրին անդրադարձել է հանրապետությունում ջրաչափերի փոխարինման գործընթացին



ՂՈՒՈՒՏՈՒՄ

**ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**







### 6.1 Փաստաթղթերի մշակում

● Ծառայությունը մշակեց և ընկերության խորհրդի նիստին (“Board Meeting”) ներկայացրեց դասընթացների և անվտանգության կառավարման մասով հունվար-դեկտեմբեր-2018 ժամանակահատվածի վերլուծական հաշվետվությունը:

● Ծառայությունը, ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, կազմակերպեց և իրականացրեց ընկերության թվով 44 արտադրական վտանգավոր օբյեկտներ հանդիսացող ամբարձիչ սարքավորումների ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցման և ԱՎՕ-ների վկայականների ստացման գործընթացները:

### 6.2 Արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննություն

● «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասին ժբ) կետի պահանջներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում համագործակցելով «Դամի տեխնիկական անվտանգության ծառայություն» ՍՊԸ-ի փորձագետների հետ իրականացվեց ընկերության ՀՏԿ-ներում շահագործվող թվով 97 արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննություն, որի հիման վրա տրամադրվեց արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական եզրակացություն:

### 6.3 Դասընթացներ/սեմինարներ

● ՈԱԱ ծառայությունը, հիրք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասին դ) կետի պահանջները «Նարեկ Գիտահետազոտական» ՓԲԸ հավատարմագրված փորձագետների հետ համատեղ կազմակերպեց թվով 38 քլորի օպերատորների մասնագիտական որակավորման և «Առաջին օգնության ցուցաբերման մեթոդները» թեմայով դասընթացները:



Քլորի օպերատորների մասնագիտական որակավորման դասընթաց

● Հիմք ընդունելով ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասին դ) կետի և ՀՀ կառավարության 25/09/2008 թվականի «Շոգու մինչև 0.07 ՄՊա ճնշման շոգեկաթսաների, ջրի մինչև 388 Կ ջերմաստիճանի ջրատաքացուցիչ կաթսաների և կաթսայական տեղակայանքների սարքվածքի ու անվտանգ շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին N 1083-Ն որոշումը «Նարեկ Գիտահետազոտական» ՓԲԸ հավատարմագրված փորձագետների հետ համատեղ կազմակերպեց և իրականացրեց ընկերության 3 աշխատակցի համար «Կաթսաների և կաթսայական տեղակայանքների սարքվածքի գնման և սարքին վիճակի պատասխանատու անձի» մասնագիտական որակավորման դասընթաց:



● Ծառայության պետը մասնակցեց Ֆրանս հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում անցկացվող ընկերության ԵSUS Տնօրինության «Արևելք» ՏՏ 20 մասնագետ տեսուչների որակավորման դասընթացի, ավարտական քննությանը քննական հանձնաժողովի կազմում: Նաև շարունակվեց «Արևմուտք» ՏՏ 20 բանվորի մասնագիտական որակավորման դասընթացների համակարգում և ավարտական քննության կազմակերպումը: Դասընթացների նպատակն է բարձարցնել ընկերության վերոնշյալ մասնագիտությունների աշխատակիցների կատարողականության մակարդակը, ամրապնդել վերջիններիս շրջանում անվտանգության մշակույթը:

**6.4. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացող միջոցառումների կիրառում**

● ՈԱԱ ծառայության կողմից ուսումնասիրվել են ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, էքսկավատորի անվտանգ շահագործման ուղղությամբ:

● ՈԱԱ ծառայության պատասխանատուները ուսումնասիրել են խմելու ջրի որակի հսկողության կենտրոնական լաբարատորիայի աշխատակիցների կողմից կատարվող ամենօրյա նմուշառման աշխատանքների ընթացքում անվտանգության պահանջների ապահովման համապատասխանությունը և կատարել են ռիսկերի գնահատում



«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.Երևան, Ն.Ադոնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.Երևան, Աբովյան 66ա  
E-mail: info@vjur.am

